ձգելով իմանում էին, թէ որ սրբիցն է և այն սրբի դուռը տանում երեխային, մատաղ անում։

Եթէ երեխան չէր քնում, վախեցնում էին, որ քնի. Օլը (ալը) ակալ ա, քուն ըլի։ Կուլի կուլին (շունը) ակալ ա, քուն ըլի։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Զօկերի ընտանեկան կեանքը ուշագրաւ է առաւելապէս նրանով, որ նա ներկայացնում է նահապետական կեանքից ընտանեկան կեանքի անցողական շրջանը։ Զօկ ընտանիքն այլևս կաշկանդուած չէ նահապետական գերդաստան բռնակալական շղթաներով, սակայն և՛ հասած չէ անհատական ազատութեան։ Զօկ կինը թէև գերդաստանի սորովը չէ, բայց և՛ ամուսնու հաւասար ընկերը չէ, թէպէտ և նա ազատուած է առանձնացած, փակ կեանքից, բայց և այնպէս դեռ ևս լիովին չի ընտելացել տղամարդկանց հասարակութեանը, նա սրանց մէջ մի առանձին խումբ, մի առանձին շրջան է կազմում, նրանց ընդհանուր խօսակցութեան չի մասնակցում։ Միշտ նկատելի է, որ մի վիհ բաժանում է այս երկու սեռի էակներին, թէպէտ և այն ևս զգալի է, որ այդ վիհն արագութեամբ փոքրանում է։

Զօկ կինը տղամարդու պէս՝ աւելի մտքի, քան զգացմունքի էակ է, նրա մէջ աւելի խելքը քան սիրտն է զարգացած։ Մտքի զարգացմամբ նա իրեն պահել գիտէ և կարող է յարմարուիլ ամէն շրջանի ու հանգամանքի. նա ամենայն արագութեամբ ընդունում է իրեն շրջապատող քաղաքակրթութիւնը, շատ հեշտութեամբ սովորում է լեզուներ, հեշտութեամբ ըմբռնում է իւր ամուսնու առևտրական ձեռնարկութիւնների ոգին և նրան խորհրդատու է հանդիսանում։ Նա նաև լաւ տանտիկին է, խնայող, որ, սակայն, ոմանց մէջ չափազանցութեան է հասնում, տնտես, նրա մառանը միշտ լի է զանազան, նրա ձեռքով պատրաստուած պաշարեղէնով, բռնուածքներով և այլն։ Նրա աշխատասիրութիւնն այն աստիճանի է հասնում, որ ամենահարուստ տներումն անգամ խոհանոցի ամբողջ հոգը նրա վրայ է ընկած։

Զօկ կնոջ մի գովելի յատկութիւնն էլ նրանումն է կայանում, որ նա միանգամայն ըմբռնելով ուման կարևորութիւնը, ամենայն կերպ աշխատում է իւր որդիներին ուման տալ։ Զօկ կնոջ պարծանքի առարկան, նրա նախանձի շարժառիթը՝ որդիների կրթու-

թիւնն է։ Ո՛րքան էլ որ բարձր լինի որդիներին ուսում տալու ծախքը նրա նիւթական դրութիւնից, այնուամենայնիւ զոկ կինը կաշուց դուրս է գալիս, հազար ու մի զրկանքի է ենթարկում իրեն, որպէսզի՝ իւր որդին հարևանի որդուց յետ չմնայ, որպէսզի ինքն էլ կարողանայ պարծիլ, թէ իւր որդին էլ ուրիշ քաղաքում է սովորում։

Սակայն այս լաւ կողմերի հետ զոկ կինն ունի նաև բաւական պակասութիւններ.—նախ նրա ներքինն արտաքինից շատ պակաս է զարգացած, ուստի և շատ աւելի բամբասասէր է, քան կարելի էր սպասել՝ դատելով արտաքինից. նա նաև այնքան մաքրասէր չէ, որքան, օրինակ, ախալքալաքցին. նրա մաքրասիրութիւնն էլ արտաքուստ է, բոլոր դիւղերից միայն Վերին Ագուլիսը մի բաղանիս ունի, որը և՛ տարուայ մեծագոյն մասը փակ է։ Սակայն այս բոլորից աւելի ցաւալին այն է՝ որ նրա սիրտը, հոգեկան կեանքը, մտքի համեմատութեամբ քիչ է զարգացած։ Սէրը, անկեղծ, սրտագին բարեկամութիւնը, օրօրը, երդեցողութիւնը, նուագածութիւնը միանգամայն թերի են։ Ամբողջ Զօկաստանում մի սիրային արկածք կամ այդ մասին մի սրտաբուղխ երգ յայտնի չէ, «Թօրդի պլրտական էլիս աղիկյ այ, քան թէ սուրբի» առածը ցոյց է տալիս նրա կրօնական զգացմունքը, ժողովրդական երգերի պակասութիւնն ապացուցանում է նրա սրտի չորութիւնը։

Եւ ի՞նչպէս կարող էր չչորանալ նրա սիրտը, երբ երկար տարիների ընթացքում բացակայում են նրա սիրոյ առարկաները՝ ամուսինը և զաւակները [1]։

ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Հիւանդը մերձիմահ դառնալիս՝ նրան խնամողները շտապում էին հրաւիրել քահանային, որ հաղորդութիւն տայ նրան։ Ապա՝ դեռ չմեռած՝ երեսը դարձնում էին դէպի աղօթարան՝ արևելք։ Երբ աւանդում էր հոգին՝ ձեռները խաչում էին կրծքին, աչքերը հուպ տալիս՝ որ խփուին։

[1]) Հետևելով մեր ընդունած ծրագրին, պէտք էր, որ խօսէինք նաև գողթնեցիների գործածած կերակրների, ժողովրդական դեղերի մասին ևս, սակայն որովհետև սրանց վերաբերեալ ոչ մի առանձնայատուկ բան չգտանք, ուստի և դանց ենք առնում, իսկ հաւատքի և դպրոցների մասին կը խօսենք՝ ամբողջ Նախիջևանի գաւառի մասին միանգամից։